



## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«11» 02 2022թ.

### ՀՐԱՄԱՆ N 42-Ա

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 495-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով և 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին պարբերության «գ» կետի 2-րդ պարբերության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածի պահանջները և հաշվի առնելով, որ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 495-Ա հրամանով «Վիզ Էյր Աբու Դաբի» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ավիաընկերություն) 2021 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 2022 թվականի մարտի 23-ն ընկած ժամանակահատվածի համար Աբու Դաբի/OMAA/-Երևան/UDYZ/-Աբու Դաբի/OMAA/ երթուղով տրված թույլտվության հիման վրա Ավիաընկերության կողմից Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային առաջին փոխադրումն իրականացվել է 2022 թվականի փետրվարի 7-ին.

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի սեպտեմբերի 29-ի «Վիզ Էյր Աբու Դաբի» ավիաընկերությանը Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների

իրականացման թույլտվություն և «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով նախատեսված արտոնություն տալու և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի հունիսի 1-ի թիվ 273-Ա հրամանում փոփոխություն կատարելու մասին» թիվ 495-Ա հրամանի 2-րդ կետի «արտոնության սկիզբ սահմանել 2021 թվականի հոկտեմբերի 31-ը՝ 36 ամսով» բառերը փոխարինել «արտոնության սկիզբ սահմանել 2022 թվականի փետրվարի 7-ը՝ 36 ամսով» բառերով:

2. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

3. Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պաշտոնակատարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի վերաբերյալ տեղեկացումը Ավիաընկերությանը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

2/11/2022

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN MIHRAN 3308540266

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ